«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1632

«23» 10 2024թ.

**«ԹԱԳ ՀԷՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ԹԱԳԵՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Թագեսյան.

Համաձայն 2024 թվականի հուլիսի 26-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «ԹԱԳ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև կնքված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների աշխատանքների կազմակերպման նպատակով բժշկական նշանակության ապրանքների և դեղորայքի մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ-2» պայմանագրի 1.1 կետի՝ «ԹԱԳ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել թիվ 100 (բազմաֆունկցիոնալ մահճակալ, թվով 20 հատ) չափաբաժնով նախատեսված ապրանքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման առարկայի պահանջը չի վերացել, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը չի իրացրել վերոնշյալ ծածկագրով պայմանագրի 2.1.1 կետով իրեն վերապահված իրավունքը, և Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը 2024 թվականի սեպտեմբերի 05-ին դիմել է Ընկերությանը՝ առաջարկելով ողջամիտ՝ տասնօրյա ժամկետում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչին ի պատասխան նույն օրը Ընկերության կողմից ստացվել է գրություն՝ անկանխատեսելի իրավիճակով պայմանավորված մինչև երեսուն օրում մատակարարման գործընթացն իրականացնելու վերաբերյալ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ըմբռնումով և ընկալումով վերաբերվելով Ընկերության գրությանը, այդ անգամ ևս չի մերժել Ընկերության խնդրանքը, առաջարկելով մինչև 2024 թվականի հոկտեմբերի 07-ը ներառյալ իրականացնել ժամկետային առումով արդեն իսկ խախտված պայմանագրային պարտավորությունները: Սահմանված ժամկետից հետո «ԹԱԳ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մատակարարման ժամկետների մասով սպառիչ պատասխան որևէ կերպ այդպես էլ չի ներկայացվել:

Այսպիսով, Պատվիրատուն Կողմերի միջև կնքված պայմանագրի արդյունավետ կառավարման նպատակով ձեռնարկել է հնարավոր և անհնար բոլոր միջոցները, մինչդեռ Ընկերության կողմից բազմիցս խախտվել են պայմանագրով ամրագրված 1.1-րդ, 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.4-րդ դրույթները, որը հանգեցրել է Ընկերության կողմից պայմանագրի էականորեն խախտմանը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը և 2024 թվականի հոկտեմբերի 16-ին «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված գրությունն առ այն, որ մինչև օրս ապրանքի մատակարարման գործընթացը չի իրականացվել՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը

միակողմանի լուծում է 26.07.2024թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-2Շ-ԵՊԲՀ-2» ծածկագրով պայմանագիրը թիվ 100 չափաբաժնի մասով ամբողջությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կապարող
Գնումների բաժնի առաջատար մասնագետ
Մ. Ղարիբյան հեռ. 010 301000 (438)